

# Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ի Ր

Ընթացից Նոր-Նախիջևանայ և Բեսարաբիոյ Թեմական Գպրոցների վասն 1891—92 ուսումնական ամին տուեալ խորհրդարանի Հոգաբարձուաց ի պաշտօնակատարէ Տեսչի Գ. Կ. Չարիխեանէ:

Աւարտելով Գպրանոցի 1891 — 92 ամի ուսման ընթացքը պարտք համարիմ ներկայացնել Մեծարոյ Հոգաբարձութեան մեր ուսուցչական ժողովի վերջին խորհրդոյ արձանագրութեան օրինակը, որմէ կերևայ աշակերտացը նոյն ամի մէջ ցցուցած յառաջադիմութեան և վարուց պատկերը և հազորդել միանգամայն այն հանգամանքները, որ տեղի ունեցած էին մեր Գպրանոցի մէջ նոյն տարեշրջանին: Անցեալ ամին Գպրանոցի գոյութեան տասը տարին լրանալուն առթիւ, մանրամասն տեղեկութիւններ յայտնած էինք նորա գործունէութեանը ու ցոյց տուած արդիւնքներուն մասին՝ մէջ բերելով նաև նորա պակասաւոր և թերի կողմերը՝ ինչպէս և իւրաքանչիւր հասարակական հիմնարկութեան:

Գպրանոցը մտնելով իւր երկրորդ շրջանը (երկրորդ տասնամեակը) անցեալ ուսումնարանական տարին ընթացել է որոշ ճանապարհով իւր ազգօգուտ գործունէութեան մէջ, օգտուելով իւր նախընթաց տարիներու փորձովը այս կամ այն մանկավարժական հարցին մէջ:

Արդարև՝ կայ արդեօք աշխարհիս երեսին այնպիսի մի անձն կամ հիմնարկութիւն, որ իրեն կատարեալ ճանաչելով իւր ասպարիզում չձգտի հասնել կատարելագործութեան աստիճանին

ոչինչ ուշադրութիւն չդարձնելով ուրիշի հեղինակութեանը կամ ցոյց տուած յառաջագիմութեանը վերայ: Մարդս հասարակական կենդանի է, որ կարօտ է, իրեն նմաններուն հետ շփուել, իրենք ուրիշին հաղորդել և ուրիշներունը ընդունել, եթէ այն օգտաւէտ ճանաչէ իրեն կամ այն գործին, որի գլուխ կանգնած է ինքը: Մեր հիմնարկութիւնը դեռ շատ մանուկ է, ուստի և կարօտ է բարեփոխմունքներու, որ ընդունուած և մտցուցած են ուրիշ նման հաստատութիւններու մէջ Docendo-discimus. (ուսուցանելով կուսանիմք) կասէ Ղատինաղին, այդ այնպիսի մէկ ճշմարտութիւն է, որի դէմ խօսել անգամ մեղանչել կլինի, որովհետև ազայոց ուսուցանելով ուսուցիչը ինքն ալ, քանի կերթայ աւելի հմուտ կդառնայ իւր մասնագիտութեանը մէջ, ճիգով և աշխատութեամբ ձեռք բերած փորձի շնորհիւ և ուրիշներուն ցոյց տուած յառաջագիմութեանը: Նոյնը կվերաբերի և մէկ ամբողջ հիմնարկութեանը, որպիսին է և մեր դպրանոցը:

Ղինելով մէկ նոր ազգային հաստատութիւն՝ ոչ թէ միայն մեր Նախնիքեանի համար, այլև ուրիշ հայաբնակ քաղաքներու և ունենալով ուրիշներէն բոլորովին տարբեր և՛ ծրագիր և՛ բարձրագոյն հաստատուած կանոնադրութիւն, մեր դպրանոցը իւր առաջին շրջանը սկսեց անհաստատ քայլերով՝ դեկալարուելով ընդհանուր դպրոցական սկզբունքներովը: Նա առաջին նուազ պատահեցաւ շատ դժուարութիւններու, երբ հարկ եղաւ աշակերաններուն դատաւանդութեան ժամեր յատկացնել և նոցա ծրագիրը կազմել և ծրագրաց չափն ու սահմանը որոշելու, որովհետև կանոնադրութեան մէջ այդ մասը թողած է անորոշ: Ուրեմն և մեզ կը մնար գէթ առ ժամ մի իբրև փորձ, հետևել ուրիշ նոյնանման միջնակարգ դպրոցներուն ընդունուած կարգերուն, մինչև որ փորձը ցոյց տար՝ որ ինչ աւելի կարևոր և աւելի օգտաւէտ էր: Ասել է՝ թէ դպրանոցի առաջի տասնամեակի շրջանը եղաւ ուսուցիչ և ուղեցոյց նորա ապագայ յառաջագիմութեանը համար: Սոյն իսկ հանգամանքներէն օգուտ քաղել ձգտելով դպրոցիս վարչութիւնը աշխատեցաւ ուսուցչական ժողովներու միջոցով պարզել այն բոլոր մանկավարժական հարցերը, որոնք կարօտ էին

խոհուն վճռի՝ ժողովի բազմակողմանի քննութեան ենթարկուելով: Այդ խնդիրներու առթիւ 1891—92 ուսումնարանական տարւոյն մէջ մենք ունեցանք 10 ուսուցչական ժողովի նիստեր, որոնց մէջ ի նկատի առնուեցան առաջին տարիներուն տեղի ունեցած թերութիւնները և առանձին առանձին յանձնաժողովներ և ժողովներ կազմուելով, փոյթ ունեցանք պարզել թէ՛ արդեօք ինչ միջոցներու պէտք է դիմել մեզ սյուսհետև՝ թէ՛ դպրանոցի աշակերտաց մէջ աւելի խիստ կարգապահութիւն հաստատելու համար և թէ՛ առհասարակ ծառայողներուն ունել միատեսակ գործունէութիւն, որը միակ առհաւատչեայ կարող է լինել դրպրոցի յառաջադիմութեանն ու բարօրութեանը: Մեծ նշանակութիւն տալով դպրոցական խնդրում կարգապահութեանը, որ լծակ կարող է համարուել նորա բարգաւաճմանը, մեր ուսուցչական ժողովը արժանի ուշադրութեամբ վերաբերուեցաւ դէպի այս խնդիրը՝ աշխատելով ընդունել և գործադրել արդի մանկավարժութեամբ ընդունուած միջոցներն ու պատիժները: Այլև ուշի ուշով քննելով մեր դպրանոցի աշակերտաց ցանկալու չափ յառաջադիմութիւն ցոյց չտալու պատճառը, որոյ մասին խնդիր յարուցած էր նաև Հոգաբարձութեան մէջ և եղած էր առաջարկութիւն, թէ մի գուցէ դպրանոցի մէջ աւանդուած առարկաներու ուսման ծաւալը շատ մեծ լինի, ուստի և անտանելի աշակերտացը համար և կարօտ փոփոխութեան, ուսուցչական ժողովը գտաւ, որ մեր դպրանոցի աւանդելի առարկաներու թիւը՝ թէպէտ արդարև շատ է, բայց աշակերտաց ցուցած տկարութեան պատճառը չէ այնքան ուսման ծաւալի ընդարձակութիւնը, որչափ ծնողաց անտարբերութիւնը ու կամակորութիւնը դպրոցի կարգապահութեան դէմ: Այնու ամենայնիւ աւելորդ չհամարուեցաւ ինչ ինչ մասնաւոր փոփոխութիւններ անել նաև ուսման ծրագրի մէջ. մի քանի դժուար առարկաներու դասաւանդութիւնը աւելի զիւրացնելու համար, մինչև որ մեր աշակերտները ձեռք բերեն աւելի զարգացումն, աւելի պաշար իրենց ստացած դասերը արդիւնաւոր կացուցանելու համար:

Աշակերտներու զարգացման խնդիրը ոչ պակաս հոգածութեան

և զբաղմունքի առարկայ էր ուսուցչական ժողովին նաև ներկայ տարւոյս մէջ: Մեր աշակերտաց վերայ յայտնի կոտեսնուէր թէ մեծամասնութիւնը, բերան ունելով միայն իրեն տուած դասերը, չաշխատէր լրացնել ուսուցիչներէն հաղորդուած տեղեկութիւնները՝ օգտուէտ և զարգացուցիչ գրքերու ընթերցանութեամբ, հետեւաբար չունի տեղեկութիւն ազգային հեղինակներու և նոցա գրուածքներու վերայ և անծանօթ է համարեա բոլորովին Ռուսաց արդի գրականութեանը: Աստուածաբանական ուսմանց սկըզբունքը ըմբռնելու կամ տրամաբանութեան և հոգեբանութեան ուսմունքը իւրացնելու համար հարկաւոր է աշակերտին ունել որոշ զարգացման աստիճան և պաշար: Աշակերտը ի նչպէս կրնայ բաւարար լուծել ուսուցիչներուն իրեն տուած գրաւոր առաջարկութիւնները (թեմաները), լինի նոցա նիւթը ազգային կամ ռուս գրականութենէն առնուած կամ վերացական, քանի որ կանոնաւոր ընթերցանութեամբ ձեռք բերած չէ այն տեղեկութիւնները և զարգացման այն աստիճանը, որը հարկաւոր կ'ընանաչուի պատմական անցքի կամ գրականական որ և է երեւոյթի սկզբնապատճառը և հետեանքը որոշելու համար: Այս խնդիրը շարունակաբար յարուցուած լինելով և նախընթաց տարիներում՝ վերջապէս գտաւ իւր գոհացուցիչ լուծումը այս ընթացիկ տարուան մէջ. դորա համար առանձին մասնաժողով ընտրուեցաւ աշակերտական գրադարանը կարգի դնելու ամենակարեւոր մանկական գրքերը և յայտնի հեղինակութիւնները ձեռք բերելու, որոշուեցաւ աւելցնելի ջանքը ընթերցանութեան սէր իւրաքանչիւր հասակի աշակերտաց մէջ արծարծելու և դպրանոցի ամեն ուսուցիչք յանձն առին իրենց առարկաներու վերաբերեալ ընթերցանութեան գրքերը բաժանել աշակերտաց և ապա հաշիւը պահանջել կարգացածներուն:

Ինչպէս վերեւը ասուեցաւ դպրանոցի անցեալը մեզ ցոյց տուեց, որ դպրանոցում աւանդուած առարկաներու ոմանց դասաւորութիւնը և ծաւալը կարօտ է մասնաւոր փոփոխութեան, աշակերտաց թեթեւութեան և գործին յաջողութեան համար. ուստի և ուսուցչական ժողովներում որոշուեցաւ, ա. Աստ-

ուածաբանութեան ծրագրէն հանել դպրոցական Աստուածաբանութիւնը՝ Աղեքսանդրեան դպրոցի վարդապետութիւնը և ընթացքէն ի բաց հանել թուաբանութեան կրկնութիւնը և շատանալ այդ առարկայի վերաբերմամբ չորրորդ դասարանի դասաւանդութեամբը՝ իսկ եռանկիւնաչափութիւնը աւանդել վեցերորդ դասարանում հինգերորդի փոխարէն։ Գ. ԱՌԱ զբաղանութեան պատմութեան հին շրջանէն անցնել միայն ամենակարևորը և բաց թողնել մանրամասնութիւնները, որ մեր աշակերտաց համար նշանակութիւն չունենալով կրնան իբրև աւելորդութիւն ծանրաբեռնել նոցա ուղեղը։ Յիշուած այս նկատողութիւնները և փոփոխութիւնները մասամբ իրագործուեցան անցեալ տարի և մասամբ պէտքէ իրագործուին ներկայ ուսումնական տարւոյս մէջ հոգաբարձուաց խորհրդարանի հաւանութեամբը և դրամական նպաստովը։ Անցեալ ուսումնական տարին զգալի կորուստ ունեցաւ մեր դպրանոցը, զրկուելով բարձր դասարաններու ԱՌԱ լեզուի և զբաղանութեան ուսուցչէն։ Իյա Պաւլովիչը Սիւսիւկինը կնքեց իւր մահկանացուն երկարատև և ծանր հիւանդութենէն ետքը։ Հանդուցեալը մինչև վերջին շունչը, քանի որ ոյժերը բոլորովին սպառած չէին, կը յանախէր իւր դասերը, բարեխղճարար վերաբերուելով իւր պաշտօնին, սրբութեամբ կատարեց նա իւր պաշտօնը բարձր պահելով ուսուցչի վեհ կոչման գրօշակը, անմոռաց պէտք է մինչև նոցա յիշատակը ամենուս սրտի մէջ՝ իբրև ազնիւ ընկերի և պարտաճանաչ պաշտօնեայի։ Սրհնութեամբ եղիցի նորա յիշատակը։

Հանդուցեալ Սիւսիւկինի դասերը ժամանակաւորապէս յանձնուած էին Բոստովի Բէլալական ուսումնարանի ԱՌԱ լեզուի և պատմութեան Պ. Կուզրեաւցև ուսուցչի որ իւր պաշտօնավարութիւնը սկսելով փետրուարի մէջ շարունակեց մինչև Մայիս ամսուայ վերջերը։ Տարւոյն վերջը ստիպուեցաւ սա իւր մէն անկախ պատճառներով թողուլ իւր դասերը դպրանոցի մէջ, ուստի և նորա տեղը հաստատուն ուսուցիչ հրաւիրուեցաւ

դպրանոցի բարձր դասարաններու Ռուսաց լեզուի, Պատմութեան և աշխարհագրութեան համար Մոսկուայի ուսումնական շրջանի հոգաբարձուի առաջարկութեամբ վասիլ Եւմենիչ Անտօնով:

Հաւանական է՝ որ վերոյիշեալ դասարաններու աշակերտաց կանոնաւոր պարապմունքը խանգարուած լինելով՝ Կախկին ուսուցչի ցաւի սաստիկանալուն պատճառաւ՝ երբ նա չէր կարողանար կանոնաւոր յաճախել իւր դասերուն և մերթ քալով, մերթ բացակայելովը անհնարին կանէր նաև ուրիշին պարապել իւր տեղը, հարկաւ, նոյն դասարաններու աշակերտները զուրկ եղան Ռուս լեզուի կանոնաւոր դասատուութենէն և չրկարողացան անցնել իրենց որոշ ծաւալը, որոց արդիւնքը ակներև յայտնուեցան հարցաքննութեան փամանակ, Քննութեան ցոյց տուած արդիւնքը թէև ձևականապէս ասելով՝ բաւարար էր, սակայն աննշմարելի չէր և աշակերտաց թուլութիւնը, մահաւանդ գրաւոր աշխատութեանց մէջ: Յուսամք որ ներկայումս ունենալով հանգուցելոյն նման պարտաճանաչ այլ ուսուցիչ, կարող կլինենք այս տարուայ ընթացքի մէջ լրացնել պակասորդը, եթէ արդիւնաւոր լինին ձեռնարկած միջոցներս:

Գալով այլ ուսուցչաց ցուցած արդիւնքներուն, ճշմարտութիւնը կը հարկադրէ խոստովանել որ անցեալ տարին, չնայելով ուսուցչաց ընդհանուր պարտաճանաչութեանը, ուրիշ տարիներու հետ համեմատելով աւելի անյաջող անցաւ, յաճախ պատահած վարակիչ հիւանդութիւններու պատճառաւ, որ շատ անգամ արգելք եղան նոցա կանոնաւոր պարապմանքը: Ուստի և դասարանէ դասարան փոխադրուող և գովասանական մրցանակներով վարձատրուած աշակերտաց թիւը աւելի պակաս է այս տարի, քան թէ նախընթաց տարիները:

Տարւոյն վերջը աշակերտաց ընդհանուր թիւն էր 216, նոցանէ փոխադրուածներն են 138, մնացողները 73, արձակուողները 6, փոխադրուողներէն գովասանական մրցանակաց արժանի տեսուեցան 14 հոգի, դպրանոցական դասընթացը աւարտեցին 3 հոգի Բուզացեան Յարութիւն, Նաւասարդեան Ներսէս և Խամբուրեան Գրիգոր, որոցմէ առաջինը ստանձնած է

ուսուցչական պաշտօն իրեն գիւղի դպրոցում: Երկրորդը ուղևորեցաւ Էջմիածին ուսմանըը շարունակել հոգևոր ճեմարանի մէջ. իսկ երրորդը ընտրեց առևտրական ասպարէզ:

Յարակցած աղիւսակէն կերեայ դպրանոցի աշակերտաց ընդհանուր թիւը թէ տարուան սկզբին և թէ վերջը, որպէս և նոցա քննութեան ցուգած արդիւնքը:

### ՅՈՒՑԱԿ

Թուոյ աշակերտաց թեմական Գպրանոցի ըստ դասարանաց յընթացս 1891—92 ուսում. ամի:

Գասարանք	Թ ի ւ ա շ ա կ ե ր տ ա ց									
	Տարւոյն ընթացի մէջ	Արձակելոց տարւոյն մէջ		Տարւոյն վերջը	Արձակելոց տարւոյն վերջը		Փոխադրելոց	Մնացելոց	Երևուողներ	Գոյնաւորներ
		ըստ կամայ	ըստ որոշման տող		ըստ կամայ	ըստ որոշման տող				
Ատոր. Նախակրթ.	44	5	"	40	"	1	29	10	34	10
Միջին Նախակրթին.	57	3	"	54	"	1	37	16	38	19
Բարձր Նախակրթ.	45	3	"	42	"	1	22	19	31	14
Ա. Գասարան.	37	3	"	34	"	1	17	16	20	17
Բ. Գասարան.	20	2	"	18	"	"	9	9	8	12
Գ. Գասարան.	13	"	"	—	"	"	—	—	—	—
Դ. Գասարան.	5	"	"	5	"	"	5	—	3	2
Ե. Գասարան.	5	"	"	5	"	"	5	—	3	2
Զ. Գասարան.	6	"	"	6	"	"	4	2	1	5
<b>Գումար</b>	<b>232</b>	<b>17</b>	<b>"</b>	<b>216</b>	<b>1</b>	<b>4</b>	<b>138</b>	<b>73</b>	<b>144</b>	<b>88</b>

## ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ.

Ի 4. Յունիսի 1892 ամի գումարեցաւ ուսուցչական ժողով գարանոցիս ընդ նախագահութեամբ Մեծ. Տեսչի Պ. Գալստայ Չաւրիսեան և յառաջիկայութեան ամենայն ուսուցչաց: Ժողովս պարասպեցաւ յակն արկանել զարդիւնս Հարցաքննութեանց, ըստ որոց և որոշեաց զյառաջագէմն փոխադրել ի բարձրագոյն դասարանս, տկարացելոցն ի մի կամ յերկուս առարկայս ընդ իւրում բարեհայեցողութեան տալ վերաքննել յՕգոստոս ամսեան, իսկ զյոյժ տկարս ամենևին թողուլ ի դասարանս իւրեանց:

Արդ՝ յետ մանրագնին քննութեանց արժանի դատեցան փոխադրելոյ ի ստորին նախակրթարանէ ի Միջինն:

- |                                      |   |
|--------------------------------------|---|
| 1. Այգինեան Ստեփաննոս.               | 14. Պարոնեան Յովհաննէս մրր-<br>ցանակաւ. |
| 2. Աթթարեան Յովակիմ.                 |   |
| 3. Բիչինճեան Սարգիս.                 | 15. Պոպով Յարութիւն մրցա-<br>նակաւ.     |
| 4. Թաշեան Սահակ.                     |   |
| 5. Թերքեան Գէորգ.                    | 16. Պոպով Ստեփաննոս.                    |
| 6. Թորոսեան Թորոս.                   | 17. Սարգսեան Արշակ.                     |
| 7. Խարազեօղեան Սարգիս՝<br>մրցանակաւ. | 18. Սրմաքեշեան Երեմիա.                  |
| 8. Կաթևնիկեան Յակոբ.                 | 19. Սրմաքեշեան Չաքարիա.                 |
| 9. Հալաճեան Յովհաննէս.               | 20. Սրմաքեշեան Մարտիրոս Բ.              |
| 10. Մարութայեան Նիկողայոս.           | 21. Տիւրկերեան Մկրտիչ.                  |
| 11. Միրճանեան Լուսեղէն.              | 22. Քացախեան Մանուկ.                    |
| 12. Չախմախեան Գէորգ.                 | 23. Քելլէշահինեան Քերովբէ.              |
| 13. Պետրոսեան Աղեքսանդր.             | 24. Ֆարմաշոնեան Գրիգոր.                 |
|                                      | 25. Սարգսեան Սարգիս.                    |

Իսկ Քեչեճեան Խաչատուր՝ որ առ տկարութեան անձին իւրոյ բացակայ գտաւ ի քննութեանց, փոխադրի ի միջին նախակրթարան տաւնց քննութեան, սակս բարի վարուց իւրոյ և յառաջագիմութեան յուամուս յընթացս տարւոյն

Քննեցի յՕգոստոս ամսն յամենայն ատարկայս:

- 1. Բարիեան Գէորգ.
- 2. Կեթմիրեան Գասպար.
- 3. Յակովբեան Կոստանդին.
- 4. Տէր Մանուէլեան Յովակիմ:

Սոյնպէս քննեցի յօգոստոս ամսեան և Շաաւորեան Աղեքսանդր իբրև ի պատիժ սակս իսոյս տալոյ նորա առանց յարգելի իրիք պատճառի, նա թէև գաղտ իսկ ի ծնողաց իւրոց, ի քննութենէ թուարանութեան:

Վերաքննեցի ի Ռուս լեզուի Զարութեան Յարութիւն:

Թողան ի ան նախակրթարանի

- 1. Դրիճանեան Գրիգոր.
- 2. Եղիայեան Մկրտիչ.
- 3. Երէց իոսեան Մանուկ.
- 4. Միսնիկեան Սահակ.
- 5. Մարթածեան Օհան.
- 6. Յովհաննիսեան Աստուածատուր.
- 7. Արմաքեշեան Մարտիրոս Ա.
- 8. Փութուշեան Յակովբ.

Իսկ Քեմենչեճեան Գրիգոր վասն անընդունակութեան արձակի: Արձակեալ են ըստ յօժար կամաց իւրեանց Զարիֆեան Էմմանուէլ, Խաղեղեան Մարտիրոս և Պոպով Խաչատուր:

Ի Քիշին նախակրթարանէ ի Բարձր նախակրթարան.

- 1. Աղամալեան Աւետիք.
- 2. Այվազեան Յովակիմ.
- 3. Այվազեան Պօղոս.
- 4. Այգինեան Ղազարոս.
- 5. Աստուածատրեան Գէորգ.
- 6. Բարութեան Կոստանդին.
- 7. Բայեան Թէօֆորոս.
- 8. Բեանիկեան Մինաս մրցանակաւ.
- 9. Բիլիկեան Մարտիրոս՝ մրցանակաւ.
- 10. Բողգանեան Սարգիս.
- 11. Թերզիեան Վարդերես.
- 12. Թորոսեան Յովակիմ.
- 13. Թուելեան Աղեքսանդր՝ մրցանակաւ.
- 14. Խաղեղեան Յակովբ.
- 15. Խատամեան Գէորգ.
- 16. Խըրըմլեան Պետրոս.
- 17. Կարապետօղլուեան Նազարէթ.
- 18. Ճանթեմիրեան Սրապիոն.

- |                              |                           |
|------------------------------|---------------------------|
| 19. Մենիկեան Յարութիւն.      | 26. Պոպով Բարդուղիմէոս.   |
| 20. Միրճանեան Սիմէօն.        | 27. Պոպով Գէորգ.          |
| 21. Մինասեան Լևոն.           | 28. Պոպով Ստեփաննոս.      |
| 22. Մորթածեան Յարութիւն.     | 29. Սազինեան Խաչատուր.    |
| 23. Նահապետեան Աստուածատուր. | 30. Սազիրեան Թովմաս.      |
| 24. Չէօրէքեան Գրիգոր.        | 31. Վարդերեսեան Մելքոն.   |
| 25. Պարոնեան Մարտիրոս.       | 32. Վարդապարոնեան Աւետիք. |
|                              | 33. Քեչեճեան Արամ.        |

Պոպով կարապետ՝ որ անյայտ իմն պատճառաւ բացակայ գըտաւ ի քննութեանց, վասն բարի վարուց իւրոյ և յառաջադիմելոյն յընթացս տարւոյն փոխադրի առանց ենթարկելոյ քննութեան:

Քննեսցի յօգոստոս ամսեան յամենայն առարկայս Ասմարեան Յարութիւն և Պապիկեան Օգոսենտ միայն ի Ռուս լեզուի:

Վերաքննեսցի Պոպով Սերուրէ ի Ռուս լեզուի և Գանձապետեան Գէորգ՝ ի թուաբանութեան:

Թողան ի «ին նախակրթարանի:

- |                               |                             |
|-------------------------------|-----------------------------|
| 1. Ախաշեան Խաչատուր.          | 9. Խաճեան Մինաս.            |
| 2. Այվազեան Աստուածատուր      | 10. Հաղրբէկեան Յովակիմ.     |
| 3. Աւետիքեան Յովակիմ.         | 11. Խոճապարոնեան Նիկողայոս: |
| 4. Պիտելեան Պետրոս.           | 12. Հալաճեան Սահակ.         |
| 5. Պիտելեան Սիմէօն.           | 13. Մելիքզատեան Գեղամ.      |
| 6. Խապախաղաշեան մկրտիչ.       | 14. Պոպով Աղեքսանդր.        |
| 7. Խալփախչեան Խաչատուր.       | 15. Պոպով Նիկողայոս.        |
| 8. Խոճապարոնեան Աստուածատուր. |                             |

Արձակեալ են կամաւորապէս 1, Այուսեան Ռափայէլ, 2, Խոճեան, Յովակիմ, 3, Շգրեան Մանուկ, իսկ Տոխասեան (Մանուկ), Գարրիէլ ըստ որոշման Ժողովոյ ուսուցչաց:

Ի Բարձր Կաթողիկոսական Եկեղեցի

- |                               |  |
|-------------------------------|--|
| 1. Ալաճեան վարդան.            | ցանակաւ Ա. կարգի.                                |
| 2. Աղաբարեան Սարգիս.          | 12 Ստեփաննոսեան Արսէն.                           |
| 3. Բիլիկեան Ղազարոս.          | մրցանակաւ Բ. կարգի.                              |
| 4. Զէյթունեան Սերովբէ.        | 13. Տապախեան Գէորգ.                              |
| 5. Թորոսեան Կոստանգին.        | 14. Տէր Գրիգորեան Մելքոն.                        |
| 6. Լոտոջնիկեան Ասատուածատուր. | 15. Տէր Յակովբեան Գաբրիէլ<br>մրցանակաւ Բ. կարգի. |
| 7. Լոտոջնիկեան Գրիգոր.        | 16. Տէր Մանուէլեան Յակովբ.                       |
| 8. Կաթեճնիկեան Սերովբէ.       | 17 Փախալեան Գրիգոր.                              |
| 9. Հալաճեան Գաբրիէլ.          | 18. Քալոսայեան Յովսէփ մրցա-<br>նակաւ Բ. կարգի.   |
| 10. Մխիթարեան Կարապետ.        | 19. Պոպով Գրիգոր.                                |
| 11. Ճլալուխեան Գաբրիէլ մըր-   |  |

Իսկ Քեչեճեան Յովհաննէս, որ առ տիարութեան անձին իւրոյ չկարաց ներկայ լինել քննութեանց, փոխադրի ըստ որոշման Ժողովոյս վասն բարի վարուց իւրոյ և յառաջադիմութեան յուսմունս առանց քննութեան:

Քննեսցին յօգոստոս ամսեան ի Հայ լեզուի 1, Մխնիկեան Աղեքսանգր 2, Մխնիկեան Լևոն. 3, Արբէարեան Աւետիք, 4, Արմաբիշեան Ղուկաս և 5, Քաբիլեան Միքայէլ:

Թողան ի Կրթական Եկեղեցի

- |                        |                           |
|------------------------|---------------------------|
| 1. Անանեան Գաւիթ.      | 9. Մաղաբեան Յովսէփ.       |
| 2. Աւետիքեան Միքայէլ.  | 10. Յարութիւնեան Մկրտիչ.  |
| 3. Աֆղանգիլեան Մարկոս. | 11. Զառլիսեան Սերովբէ.    |
| 4. Թումանեան Մկրտիչ.   | 12. Զեսլեան վաղերիանոս.   |
| 5. Խոճայեան վարդան.    | 13. Սերբերակեան Խաչատուր. |
| 6. Կարապետեան Միքայէլ. | 14. Սերբերակեան Կարապետ.  |
| 7. Կիւնէշեան Մկրտիչ.   | 15. Քացիյեան վարդերես.    |
| 8. Հեքիմեան Յովակիմ.   | 16. Քափանակեան Խաչատուր.  |

Արձակեալ են յօժար կամօք 1, Ամիրեան Գարրիէլ, 2, Խաչի-  
չեան Միքայէլ, 3, Կրասիլնիկեան Յակովբ:

Ըստ որոշման Ժողովոյս վասն անյառաջագիմութեան և զերիամ  
մի շմնալոյ ի սմին նախակրթարանի, որպէս տրամատրէ կանո-  
նագրութիւն գպրանոցիս՝ արձակի բիլիկեան Վարդան:

Յ) Դասարանի յերկրորդ.

- |                         |   |
|-------------------------|---|
| 1. Աբրահամեան Խաչակ.    | 10. Սաղիմեան Միքայէլ.                           |
| 2. Բերբերեան Տիգրան.    | 11. Տէր Կարապետեան Ստե-<br>փաննոս.              |
| 3. Եղիազարեան Լուսեղէն. | 12. Յիլինեան Յովհաննէս.                         |
| 4. Թանքայեան Արամ.      | 13. Հալաճեան Կարապետ մըր-<br>ցանակաւ Ա. կարգի.  |
| 5. Խլեբնիկեան Լուսեղէն. | 14. Զուպարեան Միքայէլ մըր-<br>ցանակաւ Բ. կարգի. |
| 6. Կարապետեան Խաչատուր. |   |
| 7. Հալաճեան Քրիստափոր.  |   |
| 8. Մրզապարոնեան Մանուկ. |   |
| 9. Պարոնեան Յովհաննէս.  |   |

Քննեցի յօգոստոս ամսեան բաց ի կրօնից յամենայն առար-  
կայս Խաչեան Միքայէլ:

Վերաքննեցին 1, Բերբերեան Մուրատ ի լատին լեզուի. 2,  
Մեսնիկեան Մարտիրոս ի Հայ լեզուի (քննեցաւ և փոխագրե-  
ցաւ):

Արձակին յօժար կամօք 1, Խոցվարչեան Գէորգ. 2, Քարիլեան  
Մոսէս և 3 Փախալեան Ադամ:

Իսկ Ասլանեան Աւետիք վասն անյառաջագիմութեան:

Մեան է «Քննարանի.

- |                       |                            |
|-----------------------|----------------------------|
| 1. Աճմեան Խաչատուր.   | 6. Թիբիճեան Մարտիրոս.      |
| 2. Բաղդիկեան Խաչերես. | 7. Թիբիճեան Ներսէս.        |
| 3. Ենիկեան Աւետիք.    | 8. Խալաճեան Գէորգ.         |
| 4. Եսայեան Կարապետ.   | 9. Խաչկոռուկեան Յովհաննէս. |
| 5. Զարիֆեան Մատթէոս.  | 10. Ղազարեան Գրիգոր.       |

- |                           |                            |
|---------------------------|----------------------------|
| 11. Մելիքեան Բաղդասար.    | 14. Տէր Միքայէլեան Գաբրիէ, |
| 12. Մերջանեան Բաղդասար.   | 15. Քէօսէեան Գէորգ.        |
| 13. Յարութիւնեան Անդրէաս. | 16. Օգսենտեան Գալուստ.     |

ՅԵՐԵՐԴ ԴԱՍԱՐԱՆԷ ԵՎ,

- |                          |                       |
|--------------------------|-----------------------|
| 1. Բեռեղեան Գրիգոր.      | 6. Չարիխեան Սերուբէ.  |
| 2. Բէկզուլեան Գրիգոր.    | 7. Չոպանեան Միքայէլ.  |
| 3. Գրուզինեան Խաչատուր.  | 8. Քեչեկեան Խաչատուր. |
| 4. Եարմաղայեան Խաչատուր. | 9. Քեչեճեան Գէորգ.    |
| 5. Մկրտչեան Յովհաննէս.   |                       |

Վերաքննեցի յօգոստոս ամսեան ի գաղղիացւոց լեզուի և յաշխարհադրութեան Չուպարեան Ստեփան:

ՄՆԱՆ Է ԱՅՆ ԴԱՍԱՐԱՆԷ

- |                      |                          |
|----------------------|--------------------------|
| 1 Բարդախչեան Կարապետ | 5 Սեֆիրեան Ղազարոս       |
| 2 Յովնանեան Լևոն     | 6 Քիչեճեան Մելքոն        |
| 3 Չեսլեան Գաւիթ      | 7 Քրիստոսոսուրեան Սիմէոն |
| 4 Սարաճեան Վարդան    | 8 Օգսենտեան Նիկողայոս.   |

Կամաւորապէս արձակի Սրմաքիշեան Աւետիք:

ՅԵՐԵՐԴ ԴԱՍԱՐԱՆԷ Է ՉՐԵՐԴ

- |                        |                       |
|------------------------|-----------------------|
| 1 Բարասինեան Աղէքսանդր | 5 ՄաՏօիսեան Յարութիւն |
| մից. Բ. Կարգի,         | 6 Մկրտչեան Խաչատուր   |
| 2 Եղիազարեան Գրիգոր    | 7 Չայլախեան Յովհաննէս |
| 3 Թիքիճիեան Մարտիրոս   | 8 Պապիեան Սիմէոն      |
| 4 Հեքիմեան Յակոբ       | 9 Սրմաքեշեան Երեմիա   |

Իսկ Գրուզինեան Գրիգոր վերաքննեցի յօգոստոս ամսեան յընդհանուր պատմութեան:

Թողու յիւրում դասարանի Խաչկոռուզեան Մկրտիչ:

Յօժարակամ արձակին, 1, Մեհանաճեան Մակար, և 2, Պոպով Սարգիս:

Ի Զարդարող Դասարանէ Ի Հինգերորդ

- 1 Անտիեան Գրիգոր
- 2 Թաշեան Լևոն
- 3 Կաթենիկեան Գէորգ
- 4 Պոպոլ Թադէոս
- 5 Սաղիթեան Վարդերես

Ի Հինգերորդ Դասարանէ Ի Վեցերորդ

- 1 Գէնճեան Յակոբ
- 2 Սալթիկեան Յակոբ
- 3 Սրմաբեշան Յովակիմ
- 4 Քիչեկեան Կարապետ մրց. Բ. կարգի.

Սրմաբեշեան Կարապետ վերսքնեսցի ի գրահաշուի յՕգոստոս ամսեան:

Աւարտին զընթացս Գալրոցական ուսմանց և ստանան զաւարգման վկայագիրս:

- 1 Բուղայեան Յարութիւն
- 2 Խամբուրեան Գրիգոր
- 3 Նաւասարդեան Ներսէս

Իսկ Անտիեան Անուիրիոսի զորմէ ընդ երկար բանք եղէն ի ժողովիս, ժողովս առաւելութեամբ ձայնից անհնարին համարեցաւ հաւասար այլոց տալ նմա զաւարտման վկայագիր վասն անչափ թուութեան նորա յուսողական գիտութիւնս, և զի ըստ գրամագրելոյ կանոնագրութեան Գալրանոցիս չկարէ նա ամ մի ևս մնալ ի նմին գասարանի, վասն որոյ սահմանեցաւ տալ նմին զվկայագիր Զ. գասարանի:

Թողան ի սմին գասարանի Թաշեան Սարգիս և Քէօնէեան Մովսէս:

Պ Ա Տ Ա Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՏԻՑ ԵՒ ԵԼԻՑ ԳՈՒՄԱՐԱՑ ԳՊՐԱՆՈՑԻ ՎԻՃԱԿԻՍ  
ՎԱՍՆ 1891—92 ՌԻՍՈՒՄՆ. ԱՄԻՆ.

Մ Ո Ւ Տ Ք

Նպաստ քաղաքական վարչութեան	•	•	Բ.	Կ.
Վարձ շինուածոյ խալիպեան ուսումն.	•	•	6875	37
			3000	—

	Բ.	Կ.
Վարձ կրպակայ Գպրանոցի . . . . .	450	—
Նպաստ եկեղեցեաց վիճակի . . . . .	3275	—
Թոշակ աշակերտաց . . . . .	4366	—
Տոկոսիչք գրամոց ընթաց. հաշուով . . . . .	147	90
Գին վաճառեալ գրենոյ ի մասենադարանէ Գպրանոցի	29	60
Գումար ստացեալ ի ժառանգէ հանգուցեալ Խ. Տեաչ- կովի ի հաշիւ տոկոսեաց կտակաւանդեալ գումարին	1200	—
	<hr/>	
Գումար	19,343	87.

Ե Լ Ք.

Թոշակք տեսչի և ուսուցչաց գպրանոցական դա- սարանայ . . . . .	12315	1
Թոշակք ուսուցչաց նախակրթարանայ . . . . .	2980	—
Թոշակք երից վերակացուաց աշակերտաց . . . . .	1000	—
Թոշակ մաստենադարանապետի . . . . .	150	—
Վարձ ծառայից . . . . .	440	—
Մախք վասն ուսումն. պիտոյից . . . . .	214	51
Մախք անտեսականք . . . . .	784	43
Գումար տուեալ եկ. Հոգադարձութեան ի գնումն տոկոսաբեր արքունի գրամատոմնաց ի հաշիւ Տեաչ- քովեան գումարի . . . . .	773	76
Գումար ծախսեալ ի վրայ շինուածոյ գպրանոցի . . . . .	204	69
Խոճիկ գործաւարի Հոգաբարձ. . . . .	500	—
	<hr/>	
Ընդամենայն	19,092	45
Մնացորդ առ սկիզբն նոր ամի	251	42
	<hr/>	
Գումար	19,343	87